ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ 16–29 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱԱՀ Տվյալագիտության և ՀԱՊՀ ԻՏ ամբիոնների պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի
գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
vardgohar@yandex.ru

DOI: 10.54503/978-9939-1-2075-1-257

Համառոտագիր

Հոդվածում ուսումնասիրվել են ներկայիս պայմաններում ՀՀ աշխատաշուկայում 16–29 տարեկան երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները: Պաշտոնական վիճակագրական թարմ տվյալների հիման վրա վերլուծության են ենթարկվել նշված տարիքային խմբի երիտասարդների առաջին անգամ աշխատանք փնտրողները՝ ըստ սեռի և կրթական մակարդակի, նրանցից պաշտոնապես գրանցված գործազուրկները՝ ըստ սեռի, բնակության վայրի և այլ հատկանիշների: Երկրորդվող խմբավորումների մեթոդով (մասային վերախմբավորմամբ) կատարվել է նշված տարիքային խմբի երիտասարդների թվաքանակի հաշվարկ վերջին հինգ տարիների համար՝ հիմնվելով ՀՀ ՎԿ-ի կողմից հրատարակված Հայաստանի 2021–2024 թթ. վիճակագրական տարեգրքերի տվյալների հիման վրա, նրանց տարեկան թվաքանակի փոփոխությունների զարգացման միտումների բացահայտման և կանխատեսումներ կատարելու համար:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ ազգաբնակչություն, աշխատանքի շուկա, զբաղվածություն, գործազրկություն, 19–29 տարեկան երիտասարդներ, աշխատուժի առաջարկ, ժամանակագրական շարքեր, կանխատեսումներ:

MAIN EMPLOYMENT PROBLEMS FACED BY YOUTH AGED 16–29 IN THE LABOUR MARKET OF THE RA IN THE ERA OF DIGITAL TRANSFORMATION

GOHAR VARDANYAN

Armenian National Agrarian University, Department of Data Science
National Polytechnic University of Armenia
Department of Engineering Economics, Professor
Senior Researcher at the Institute of Economics after M. Kotanyan
of the NAS of the Republic of Armenia
PhD in Economics, Professor
vardgohar@yandex.ru

Abstract

The article examines the employment issues of young people aged 16–29 in the current labour market of the Republic of Armenia. Based on the latest official statistical data, the analysis of first-time job seekers of the mentioned age group by gender and educational level, as well as the officially registered unemployed by gender, place of residence and other characteristics was carried out. Using the secondary grouping method (proportional regrouping of data), the author calculated the number of young people in the specified age group over the past five years based on data from the statistical yearbooks of Armenia, published by the Statistical Committee of the Republic of Armenia for 2021–2024, to identify the main trends in changes in their numbers in dynamics, as well as to determine their expected numbers for the coming period (until 2028).

Keywords and phrases. Population, labour market, employment, unemployment, young people aged 19–29, labour supply, time series, and forecasts.

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ЗАНЯТОСТИ МОЛОДЕЖИ 16–29 ЛЕТ НА РЫНКЕ ТРУДА РА В ЭПОХУ ЦИФРОВЫХ ТРАНСФОРМАЦИЙ

ГОАР ВАРДАНЯН

Профессор кафедр Даталогии Национального аграрного университета Армении и Инженерной экономики Национального политехнического университета Армении, научный сотрудник Института экономики НАН РА имени М.Котаняна, кандидат экономических наук, профессор

vardgohar@yandex.ru

Аннотация

В статье рассматриваются вопросы занятости молодежи в возрасте 16–29 лет на нынешнем рынке труда Республики Армения. На основе официальных статистических данных проведен анализ впервые ищущих работу лиц указанной возрастной группы по полу и уровню образования, а также официально зарегистрированных безработных по полу, месту жительства и другим признакам. Методом вторичной группировки (долевая перегруппировка данных) автором рассчитана численность молодежи указанной возрастной группы за последние пять лет на основе данных статистических ежегодников Армении, опубликованных Статистическим комитетом Республики Армения за 2021–2024 гг., для выявления основных тенденций изменения их численности в динамике, а также для определения их ожидаемой численности за предстоящий период (до 2028 г.).

Ключевые слова: народонаселение, рынок труда, занятость, безработица, молодежь в возрасте 19–29–лет, предложение рабочей силы, временные ряды, прогнозы.

Ներածություն

Ներկայումս կրթության համակարգի զարգացումը տեղի է ունենում յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նշանակալի վերա-փոխումների պայմաններում, այդ թվում նաև՝ քաղաքացիական հասարա-կության, մրցակցային հարաբերությունների ձևավորումը, փոփոխությունները սոցիալ-աշխատանքային հարաբերությունների ոլորտում, երիտասարդ մասնագետների պատրաստման որակի նկատմամբ պահանջները և այլն:

Ամեն օր մարդիկ, ընկերությունները, կրթական հաստատություններն ու պետությունները հարցեր են արծարծում աշխատաշուկայի վերաբերյալ. ինչ կրթություն պետք է ստանա իմ երեխան, արդյոք կա՞ որակավորված աշխատուժ այն տարածաշրջանում, որտեղ մեր ընկերությունը նախատեսում է հիմնել նոր բիզնես, անհրաժեշտ է վերանայել կրթական ծրագրերը, պե՞տք են արդյոք հավելյալ խթաններ՝ ուսանողներ ներգրավելու համար: Աճում է մտահոգությունը, որ ներկայիս աշխատուժի հմտությունները չեն համապատասխանում տնտեսության արագ փոփոխվող պահանջներին: Հատկանշական է, որ որակավորումների և հմտությունների անհամապատասխանությունը դարձել

է քաղաքականություն մշակողների մտահոգությունը թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրներում՝ պայմանավորված աշխատաշուկայի արագ փոփոխություններով, գլոբալացմամբ, տեխնոլոգիական զարգացումներով և ժողովրդագրական փոփոխություններով: Շատ մարդիկ զբաղեցնում են աշխատատեղեր, որոնք չեն համապատասխանում իրենց կրթական մակարդակին: Բազմաթիվ գործատուներ նշում են, որ դժվարանում են գտնել այնպիսի աշխատողների, որոնք ունեն իրենց բիզնեսը զարգացնելու և նորարարությունն առաջ մղելու անհրաժեշտ հմտություններ **[1, էջ 51-52]:**

Ինչպես հայտնի է, երիտասարդները իրենցից ներկայացնում են բնակչության սոցիալ-ժողովրդագրական առանձին խումբ, որ առանձնանում են իրենց տարիքային և սոցիալական կարգավիճակով, ինչպես նաև բնութագրվում են իրենց յուրահատուկ հետաքրքրություններով և արժեքներով:

Հոդվածում նպատակ է դրվել ուսումնասիրելու ներկայիս պայմաններում ՀՀ աշխատաշուկայում երիտասարդ հատվածի՝ 16-29 տարեկան երիտա-սարդների զբաղվածության հիմնախնդիրները՝ վերլուծելով ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակված պաշտոնական վիճակագրական տվյալները, մասնավորապես, առանձնակի ուշադրություն է դարձվել տվյալ տարիքային խմբի երիտասարդների առաջին անգամ աշխատանք փնտրողների, վերջիններիս՝ ըստ սեռի և կրթական մակարդակի բաշխվածության, նրանցից պաշտոնապես գրանցված գործազուրկների՝ ըստ սեռի, բնակության վայրի և այլ հատկանիշների բաշխվածության վրա, ինչպես նաև նրանց կողմից աշխատաշուկայում ներկայացվող աշխատուժի առաջարկին (ըստ մարզերի/տարածաշրջանների): Այդ նպատակից ելնելով՝ հոդվածում դիտարկվել է Հայաստանում սերնդափոխությամբ առաջացած սոցիալական բեկման կամ շրջադարձի գործնթացը, որը պայմանավորված է թվային տեխնոլոգիաների կիրառման արդյունքում սերունդների միջև դրսևորված տարբերություններով: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել 2000-ականներին հասունացած հազարամյա սերնդի վրա:

Տեսամեթոդական հիմքեր

Ներկայացված հետազոտության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել ոլորտին վերաբերող ՀՀ կառավարության համապատասխան որոշումները, ոլորտի ուսումնասիրությամբ զբաղվող հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատությունները և այլն, իսկ տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալները և հրապարակումները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքագրման, երկրորդվող խմբավորումների, կառուցվածքի հարաբերական մեծությունների, ժամանակագրական շարքերի վերլուծական հարթեցման և կանխատեսումների վիճակագրական վերլուծության մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս կատարելու համապատասխան եզրահանգումներ:

Գրականության վերլուծություն

Գաղտնիք չէ, որ ժամանակակից հասարակությունը ներկայումս

մուտք է գործել սոցիալական բեկումների դարաշրջան: Ի տարբերություն 1990-ականների՝ 2000-ական թվականներին դա տեղի է ունենում աշխարհի բոլոր երկրներում և վերջինս ուղղակիորեն կապված չէ արմատական քաղաքական կամ տնտեսական վերափոխումների հետ, այլ ընդհակառակը, տեղի է ունենում լուրջ բարեփոխումների բացակայության պայմաններում, կայունացման ժամանակաշրջանում և ավելի շուտ կապված է սերնդափոխության, այսինքն՝ վարքագծային տարբեր պրակտիկաներով և շրջակա միջավայրի ընկալման ձևերով երիտասարդների գալստյան հետ **[2, էջ 15-16]:**

Հեղինակների մեծամասնությունը կարծում է, որ. «Միլենիումի սերունդն այն մարդիկ են, որոնք նոր հազարամյակը դիմավորել են երիտասարդ տարիքում և այդ սերնդին բնորոշ է, ամենից առաջ, թվային տեխնոլոգիաներում խոր ներգրավվածությունը»: Թվային տեխնոլոգիաների և գործընթացների համաշխարհային զարգացման և համընդհանուր ներդրման հետ են համընկնում այն մարդիկ, որոնք ծնվել ,ձևավորվել և կայացել են 21-րդ դարում (սկսած 2003 թվականից **[3, էջ 6]:**

Գիտատեխնիկական առաջընթացը, մասնավորապես՝ տեղեկատվական, կապի և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների բուռն զարգացումը 21-րդ դարում հանգեցրին թվային տարածության նոր միջավայրի ստեղծմանը, վերջինս արտահայտվում է տվյալ անհատի ինքնորոշման և ինքնարտահայտման ձևով:

Դեռևս Գարեգին Նժդեհը հայ երիտասարդությանը նվիրված իր ուղերձում գրել է՝«Ես ճշմարտութիւներ գիտեմ, որոնցից մէկն ասում է՝ ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդութեան» **[4, էջ 22]:** Կարծում եմ կհամաձայնեք՝ խորը իմաստություն արտահայտող միտք է:

Երիտասարդներին նվիրված հետազոտությունների գերակշիռ մասում հիմնական շեշտադրումը կատարվում է նրանց զբաղվածության վրա, քանի որ վերջինս դիտարկվում է որպես հիմնական փուլ՝ կրթությունից աշխատանքին անցման պարագայում:

Ինչպես իրավացիորեն կարծում են մասնագետները. «Հասարակության թվային փոխակերպումը (տրանսֆորմացիան) թվային հեղափոխության արդյունք է» **[5, էջ 5]:** Համաշխարհային տնտեսությունը թևակոխելով չորրորդ արդյունաբերական հեղափոխության շրջափուլ, կամ՝ թվային տեխնոլոգիական հեղափոխության երկրորդ փուլ, բնութագրվում է տնտեսական գործընթացներում նորագույն տեխնոլոգիաների, արհեստական բանականության, մեքենայական ուսուցման և համանման այլ գործիքների լայն կիրառության առանձնահատկություններով: Այս միտումներին համարժեք արձագանքելն արդի մարտահրավեր է կառավարությունների, գործարար շրջանակների և հասարակությունների համար: Ըստ հեղինակների՝ թվային տեխնոլոգիաները, ներխուժելով մարդկանց առօրյա կյանք, ավելի շատ տարածում են գտնում բիզնես գործընթացներում:

«Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության

միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» որոշումը ընդունվել է ՀՀ կառավարության կողմից 2021 թվականի փետրվարի 11-ին (N 183-Լ) **[6]՝** հիմնվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասի վրա, ուր նշված է՝ «Բարձր տեխնոլոգիաների զարգացումը որոշիչ դեր ունի պետության մրցունակության, անվտանգության և բնակչության կենսամակարդակի բարձրացման գործում: Այն պետությունները, որոնք ստեղծում և զարգացնում են բարձր տեխնոլոգիաները, փոփոխություններ են գրանցում մրցակցային դաշտում և առաջատար դիրքեր զբաղեցնում միջազգային ասպարեզում»: Այս համատեքստում առանձնակի կարևորվում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության դերը, ով առաջնորդվելով ՀՀ կառավարության սահմանած առաջնահերթություններով, նախատեսում է իրականացնել ՀՀ կառավարության, տնտեսության և հասարակության թվային փոխակերպումը (թվայնացումը)՝ ՀՀ պետական կառավարման ողջ համակարգում: Ընդ որում՝ այն նախատեսվում է իրականացնել 2021-2025թթ. ընկած ժամանակահատվածում: Ռազմավարության մեջ որպես թվայնացման հիմնարար պայման է դիտարկվում նաև կրթության՝ թվային հմտությունների զարգացումը (տե՛ս գլուխ 4, կետ 10): Նշվում է, որ «Հայաստանի իրական թվայնացումը հնարավոր է միայն հասարակության բոլոր տարիքային խմբերի շրջանում առանցքային թվային հմտությունների զարգացման միջոցով, որը փոխկապակցված է պետական հատվածի և տնտեսության արդիականացման հետ: Թվային տեխնոլոգիաների առօրյա օգտագործումը կբարելավի հանրային կյանքի բազմաթիվ ոլորտներ, դա զգալիորեն կազդի թվային հմտություններին տիրապետող քաղաքացիների կյանքի որակի վրա: Թվային հմտությունները քաղաքացիներին թույլ կտան ավելի արդյունավետ կազմակերպել իրենց շփումը պետական գերատեսչությունների, տնտեսվարողների հետ, ինչպես նաև օգտվել թվային ծառայություններից և արտադրանքներից: Թվային հմտություններին տիրապետող աշխատուժը կմասնակցի նոր տեխնոլոգիական լուծումների ներդրմանը տնտեսությունում՝ նպաստելով ՀՆԱ-ի աճին և որակական զարգացմանը»:

Ուսումնասիրության մեթոդներ

Հոդվածում ներկայացված նպատակին հասնելու համար մեր կողմից կատարվել է ՀՀ-ում 16-29 տարեկան երիտասարդ ազգաբնակչության վիճակագրական վերլուծություն՝ ըստ տարբեր հատկանիշների: Այդ նպատակով պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա հաշվարկվել են կառուցվածքի և համեմատության հարաբերական մեծություններ: Բացի այդ՝ նշված տարիքի զբաղված ազգաբնակչության թվաքանակի հաշվարկման համար մեր կողմից կիրառվել է երկրորդվող խմբավորումների մեթոդը, իսկ կանխատեսումների համար՝ ժամանակագրական շարքերի վերլուծական հարթեցման եղանակը:

Վերլուծություն և ստացված արդյունքներ

Ներքոհիշյալ աղյուսակ 1-ում ներկայացրել ենք պաշտոնական վիճակա-

գրական տվյալներ 2024 թ–ի դեկտեմբեր ամսին ՀՀ–ում առաջին անգամ աշխատանք փնտրող ազգաբնակչության վերաբերյալ՝ ըստ սեռի, կրթական մակարդակի և տարիքային խմբերի **[7, էջ 88, 90]:**

Աղյուսակ 1

ՀՀ–ում առաջին անգամ աշխատանք փնտրող ազգաբնակչությունը՝ ըստ սեռի, կրթական մակարդակի և տարիքային խմբերի
(2024 թ. դեկտեմբեր ամսին)

ամսվա վերջի դրությամբ

	Ընդամենը		**Կին**		**Տղամարդ**	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%
Ընդամենը	16 316	100	9 808	100	6 508	100
ըստ կրթության						
հետբուհական, բարձրագույն	1 958	12,0	1 423	14,5	535	8,2
թերի բարձրագույն, միջին մասնագիտական	1 907	11,7	1 449	14,8	458	7,0
նախամասնագիտական (արհեստագործական)	601	3,7	348	3,6	253	3,9
միջնակարգ ընդհանուր	10 038	61,5	5 692	58,0	4 346	66,8
հատուկ ընդհանուր	20	0,1	13	0,1	7	0,1
հիմնական ընդհանուր	1 507	9,2	767	7,8	740	11,4
տարրական ընդհանուր	285	1,8	116	1,2	169	2,6
ըստ տարիքային խմբի						
16-29 (երիտասարդներ)	5 748	35,2	3720	37,9	133	2,0
30>	10 568	64,8	6088	62,1	6 375	98,0

Աղյուսակ 1–ի տվյալներից ակներև է, որ հանրապետությունում առաջին անգամ աշխատանք փնտրող ազգաբնակչության մեջ գերակշիռ տեղ են զբաղեցնում կանայք, վերջիններս կազմում են ընդհանուր աշխատանք փնտրողների ավելի, քան 60,11%–ը, իսկ 16–29 տարեկան երիտասարդների մեջ՝ շուրջ 64,72 %–ը: Հետբուհական, բարձրագույն կրթություն ունեցող կանանց տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ ավելի գերակշռում է և կազմում է 72,68%: Թերի բարձրագույն, միջին մասնագիտական կրթություն ունեցողների շուրջ 76%–ը կանայք են, նույնը կարելի է ասել, նկատվում է մնացած խմբերում, բացի տարրական ընդհանուր կրթական մակարդակ ունեցող խմբի, ուր կանանց տեսակարար կշիռը կազմում է 40,7%:

Առանձնակի հետաքրքրություն է իրենից ներկայացնում նույն տեղեկատվական ամսական զեկույցի 90–րդ էջում բերված պաշտոնապես գրանցված գործազուրկների տվյալները՝ ըստ տարիքային խմբերի 2024

թ–ի դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ **[7, էջ 90]:** Այն ներկայացված է ներքոհիշյալ աղյուսակ 2–ում:

Աղյուսակ 2

ՀՀ–ում պաշտոնապես գրանցված գործազուրկներն՝ ըստ տարիքային խմբերի, սեռի և բնակավայրի (2024 թ. դեկտեմբեր ամսին)

ամսվա վերջի դրությամբ

	Ընդամենը		Կին		Տղամարդ		Քաղաք		Գյուղ	
	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%
Ընդամենը	37 572	100	22 703	100	14 869	100	19 213	100	18359	100
16-19	458	1,2	312	1,4	146	1,0	308	1,6	150	0,8
20-24	2 440	6,5	1 407	6,2	1 033	6,9	1527	7,9	913	5,0
25-29	3 292	8,8	2 163	9,5	1 129	7,6	1944	10,1	1348	7,3
30-34	4 744	12,6	3 290	14,5	1 454	9,8	2536	13,2	2 208	12,0
35-44	12 233	32,6	7 533	33,2	4 700	31,6	6348	33,0	5 885	32,1
45-54	8 009	21,3	4 315	19,0	3 694	24,8	3 647	19,0	4 362	23,8
55 >	6 396	17,0	3 683	16,2	2 713	18,2	2 903	15,1	3 493	19,0

Աղյուսակ 2–ի տվյալներից ակներև է, որ բերված բոլոր տարիքային խմբերից գերակշիռ տեղ է զբաղեցնում 35–44 տարեկան ազգաբնակչությունը, որոնք կազմում են պաշտոնապես գրանցված գործազուրկների ընդհանուր թվաքանակում 32,56%; դրանց թվում կանայք կազմում են 33,2%, իսկ տղամարդիկ՝ 31,6%: Նշված տարիքային խմբում 33,0%–ը քաղաքային և 32,1%–ը գյուղական բնակիչներ են:

Քանի որ մեր հետազոտության մեջ հիմնական տարիքային խումբը 16–29 տարեկան երիտասարդներն են, ուստի տանք դրանց նկարագիրը պաշտոնապես գրանցված գործազուրկների ընդհանուր թվաքանակում: 16–29 տարեկան երիտասարդների թվաքանակը նշված ժամանակամիջոցում կազմել է 6190 մարդ, որից 3882–ը կանայք են և 2308–ը՝ տղամարդ, նրանցից 3779–ը ապրում եմ քաղաքային և 2411–ը՝ գյուղական բնակավայրերում: Հետևաբար, նշված տարիքային խմբում կանայք կազմում են 62,71%, իսկ տղամարդիկ՝37,29%; 61,05%–ը քաղաքային և 38,95%–ը գյուղական բնակիչներ են:

Նույն տեղեկատվական ամսական զեկույցի 90–րդ էջում բերված է նաև 16–29 տարեկան ազգաբնակչության աշխատուժի առաջարկն՝ ըստ ՀՀ մարզերի և քաղաքամայր Երևանի 2024 թ–ի դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ **[7, էջ 90]:** Այն ներկայացված է ներքոհիշյալ աղյուսակ 3–ում:

Աղյուսակ 3

16–29 տարեկան ազգաբնակչության աշխատուժի առաջարկն՝ ըստ ՀՀ մարզերի և քաղաքամայր Երևանի (2024 թ. դեկտեմբեր ամսին)

ամսվա վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրող երիտասարդներ		նրանցից՝ գործազուրկներ		
	ընդամենը, մարդ	2024թ./ 2023թ., %	ընդամենը, մարդ	2024թ. /2023թ., %	տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	**10 687**	**90,3**	**6 190**	**83,1**	**100**
ք. Երևան	1 207	91,6	877	90,9	14,2
Արագածոտն	894	86,3	413	89,2	6,7
Արարատ	2 407	104,7	948	99,3	15,3
Արմավիր	752	83,7	365	68,6	5,9
Գեղարքունիք	1 011	94,6	805	96,2	13,0
Լոռի	1 025	89,9	721	79,1	11,6
Կոտայք	1 541	104,5	863	102,0	13,9
Շիրակ	907	82,8	523	66,9	8,4
Սյունիք	299	75,7	215	66,0	3,5
Վայոց ձոր	208	58,4	114	45,6	1,8
Տավուշ	436	57,7	346	59,5	5,6

Աղյուսակ 3-ի տվյալներից ակներև է, որ ՀՀ –ում 16–29 տարեկան աշխատանք փնտրող երիտասարդների գերակշիռ մասը բնակվում է Կոտայքի մարզում (14,4%), երկրորդ տեղում քաղաքամայր Երևանն է (11,3%), երրորդ տեղում Լոռվա մարզն է (9,6%), չորրորդ տեղում Գեղարքունիքի մարզն է (9,46%):

Գործազուրկների ընդհանուր թվաքանակում առաջին տեղում Արարատի մարզն է (15,3%), երկրորդ տեղում կրկին քաղաքամայր Երևանն է (14,2%), երրորդ տեղում Կոտայքի մարզն է (13,94%) և չորրորդ տեղում՝ Գեղարքունիքի մարզը (13,0%): Համաձայն ՀՀ ՎԿ հաշվարկների՝ 2024 թ-ի դեկտեմբեր ամսին ՀՀ աշխատաշուկայում 16–29 տարեկան ազգաբնակչության աշխատուժի առաջարկը կազմել է 19%, իսկ մնացած 81%-ը բաժին է ընկել 30 և բարձր տարիքի ազգաբնակչությանը **[7, էջ 90]**:

Պաշտոնական վիճակագրական տվյալները փաստում են, որ 2023 թ-ի տվյալներով ՀՀ-ում պաշտոնապես գրանցված գործազուրկների մեջ 16–29 տարեկան երիտասարդների տեսակարար կշիռը կազմել է 16,2%, դրանցից 1%-ը բաժին է ընկնել 16–19 տարեկան; 6,3%-ը՝ 20–24 տարեկան և 8,9%-ը՝ 25–29 տարեկան ազգաբնակչությանը: Դրանց բաշխվածությունը, ըստ սեռի, եղել է. տղամարդիկ – 15,5% և նշված տարիքային խմբերում համապատասխանաբար՝ 0,7%; 7,6%; 7,2%; կանայք – 16,6% և նշված տարիքային խմբերում

համապատասխանաբար՝ 1,1%; 5,6%; 9,9% **[8, էջ 126]:**

Ներքոհիշյալ աղյուսակ 4-ում պաշտոնական վիճակագրական տվյալների **[8, էջ 99, 9; էջ 94; 10, էջ 86; 11, էջ 80]** հիման վրա կատարել ենք երկրորդվող խմբավորում ՀՀ-ում 16-29 տարեկան զբաղված երիտասարդների թվաքանակի հաշվարկման համար, դուրս ենք բերել դրանց տեսական-փաստացի թվաքանակները և ներկայացրել ենք այն՝ առաջիկա հինգ տարիներին դրանց սպասվելիք թվաքանակի կանխատեսման համար՝ կիրառելով $\hat{Y}_t = a_o + a_1 t$ մոդելը:

Աղյուսակ 4

ՀՀ-ում 16-29 տարեկան զբաղված երիտասարդների թվաքանակը 2019-2023 թթ. և դրանց սպասվելիք թվաքանակի հաշվարկը մինչև 2028 թ. ընկած ժամանակահատվածը (հազար մարդ)

Տարեթվեր	16-29 տարեկան երիտասարդների թվաքանակը (փաստացի շարք), Y	t	t^2	Y_t	Հարթեցված շարքի տեսական և կանխատեսվող մակարդակներ ($\hat{Y}$)
2019	213,32	- 2	4	- 426,64	195,886
2020	175,81	- 1	1	- 175,81	194,705
2021	186,21	0	0	0	193,524
2022	193,92	+ 1	1	193,92	192,343
2023	198,36	+ 2	4	396,72	191,162
n= 5	$\sum Y = 967{,}62$	$\sum t = 0$	$\sum t2 = 10$	$\sum Yt = -11{,}81$	$\sum \hat{Y}_t = 967{,}62$
2024		+ 3			189,981
2025		+ 4			188,800
2026		+ 5			187,619
2027		+ 6			186,438
2028		+ 7			185,257

Աղյուսակ 4-ում բերված ժամանակագրական շարքի փաստացի տվյալներից ակներև է, որ ՀՀ-ում 16-29 տարեկան երիտասարդների թվաքանակը 2019-2023 թվականների ընթացքում ցուցաբերել է մոնոտոն նվազման միտումներ, հարթեցնելով այն, հաշվարկելով ուղիղ գծի հավասարման՝ մոդելի պարամետրերը (անհայտները) ստացել ենք, որ՝ $\hat{Y}_t = 193{,}524 - 1{,}181t$; այսինքն՝ $a_o = 193{,}524$; $a_1 = -1{,}181$: Կնշանակի՝ շարքի միջին տարեկան մակարդակը նշված ժամանակի ընթացքում կազմում է՝193,524, իսկ տարեկան նվազման գործակիցը՝ 1,181: Հետևաբար, 2028 թ-ին մնացած այլ գործոնների անփոփոխ մնալու պայմաններում ՀՀ-ում կունենանք 185257 հոգի 16-29 տարեկան զբաղված ազգաբնակչություն:

Եզրակացություն

Այսպիսով՝ հայաստանյան աշխատաշուկայի երիտասարդ հատվածի հիմնախնդիրները պետք է զուգակցվեն երիտասարդության զբաղվածության աջակցման պետական նոր քաղաքականության հետ: Պետությունը պետք է աջակցի, խթանի երիտասարդներին: Պետական աջակցությունը պետք է ուղղված լինի նաև այն անհատներին, որոնք համատեղում են աշխատանքը ուսումնական հաստատություններում սովորելու հետ՝ ճկուն գրաֆիկներ ստեղծելու համար: Երիտասարդների զբաղվածության մակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ է քաղաքական և տնտեսական կայունություն: Միայն կառավարման բոլոր մակարդակներում համատեղ ջանքերով կարելի է հասնել նշանակալի արդյունքների:

Աշխատաշուկա մուտք գործող երիտասարդները չպետք է գերագնահատեն իրենց պահանջներն ու հմտությունները և դիմեն հեղինակավոր պաշտոնների: Նրանք կարող են աշխատանք ստանալ ոչ այնքան հեղինակավոր վայրում, որը, սակայն, լավ մեկնարկային հնարավորություններ և փորձ կապահովի:

Երիտասարդները պետք է հստակ պատկերացնեն, թե ինչով են հետաքրքրված և վերլուծեն, թե ինչ է պետք աշխատաշուկային: Երիտասարդները պետք է հաշվի առնեն ժամանակակից աշխատաշուկայի պահանջները, քանի որ ստանալով կրթություն՝ ավելի հավանական է, որ նրանք գտնեն աշխատանք, որը կհամապատասխանի բոլոր պահանջներին: Սա պետք է զուգակցվի հենց երիտասարդների շահերի հետ: Ապագա մասնագիտություն ընտրելիս պետք է հաշվի առնել հետագա աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր ասպեկտները:

Այսպիսով՝ երիտասարդության զբաղվածության խնդիրները թե՛ պետության, թե՛ հենց երիտասարդների հիմնական խնդիրներից են: Ստեղծված իրավիճակից ելքը պետք է փնտրել երիտասարդների, պետական կառույցների և գործատուների համատեղ ջանքերով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղաջանյան Ս., Բադալյան Մ., Կարապետյան Լ., Թորոսյան Ա., Զարգարյան Մ., «Կրթության և մասնագիտությունների անհամապատասխանության խնդիրները ՀՀ աշխատանքի շուկայում», «Տնտեսություն և հասարակություն», 2024, N 3, «Սոցիալական քաղաքականություն», էջ 51-52:
2. Радаев В. В., « Миллениалы на фоне предшествующих поколений: эмпирический анализ»; Социологические исследования № 3, 2018, стр. 15-33 https://www.socis.isras.ru/article/7095, https://eusp.org/news/millenialy-na-fone-predshestvuyushchikh-pokolenij-empiricheskij-analiz
3. Աթոյան Վ. և ուրիշներ, «Ուսանողների արժեքային կողմնորոշիչները թվային դարաշրջանում», «Ամբերդ» ՀՊՏՀ հետազոտական կենտրոն, «Ամբերդ» մատենաշար-72, Երևան, «Տնտեսագետ» հրատարակչություն, 2024, 90 էջ:
4. Գարեգին Նժդեհ, «Հատընտիր», հրատարակիչ՝ Հայաստանի հանրապետական կուսակցություն, «Ամարաս» Երեւան, 2006թ., ընդամենը 706 էջ, էջ 22 – «Հայ Երիտասարդության»http://hygradaran.weebly.com/https://hygradaran.weebly.com/uploads/1/1/8/6/11869782/njdeh_hatntir.pdf
5. Սարգսյան Հ. և ուրիշներ, «ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները», Երևան, ԵՊՀ հրատ., 2020թ. 160 էջ:

6. ՀՀ կառավարության Որոշումը «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին», ընդունվել է 2021 թվականի փետրվարի 11-ին (N 183-Լ) https://www.arlis.am/documentview.aspx?docID=149957

7. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024թ. հունվար-դեկտեմբերին», էջ 88, 90 https://armstat.am/file/article/sv_12_24a_141.pdf https://armstat.am/am/?nid=82&id=2716

8. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2024», Երևան, 2024, էջ 126, էջ 99 https://armstat.am/am/?nid=586&year=2024 https://armstat.am/file/doc/99552423.pdf

9. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2023», Երևան, 2024, էջ 94; https://armstat.am/file/doc/99541258.pdf

10. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2022», Երևան, 2024, էջ 86; https://armstat.am/file/doc/99533253.pdf

11. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2021», Երևան, 2024, էջ 80 https://armstat.am/file/doc/99528083.pdf